

### 5.8. Համերգային գործունեությունը 2002 թվականին

2003թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործել են ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության համակարգի 17 և համայնքային ենթակայության 2 համերգային կազմակերպություններ: 2002թ. լուծարվել է 1 համերգային կազմակերպություն՝ Լոռու մարզային ֆիլհարմոնիան:

2002թ. հանրապետությունում կազմակերպվել է 396 համերգ կամ 17-ով պակաս, քան 2001թ.: Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 368, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ (պայմանագրային հիմունքներով)՝ 28 համերգ: Հանրապետությունում կայացած համերգներից 11-ը կամ 2.8%-ը կազմակերպվել են գյուղական վայրերում, 281-ը կամ 71.0%-ը՝ ֆիլհարմոնիկ համերգներն են:

2002թ. արտասահմանում կազմակերպված 23 համերգ-հյուրախաղերից 5-ն իրականացվել են ԱՊՀ երկրներում, 1-ը՝ Եվրոպայում, 4-ը՝ ԱՄՆ-ում, 7-ը՝ Միացյալ Արաբական Եմիրություններում, 3-ական՝ Սիրիայում և Իրանում:

2002թ. կազմակերպվել է 54 բարեգործական համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 4.3 հազ. մարդ: Պետպատվերով կազմակերպվել է 167 համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 13.1 հազ. մարդ, ստացված հասույթը՝ 26.9 մլն. դրամ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա է եղել 84.2 հազ. հանդիսատես: Նրանց 1.3%-ը կամ 1.1 հազ. մարդ հաճախել են գյուղական վայրերում կազմակերպված համերգներին, 62.8%-ը կամ 52.9 հազ. մարդ՝ ֆիլհարմոնիկ համերգներին: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 26՝ 2001թ. 52-ի դիմաց:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 50.4 մլն. դրամ (2001թ.՝ 61.3 մլն. դրամ), որից 38.8 մլն. դրամը ստացվել է ֆիլհարմոնիկ համերգներից, իսկ 0.2 մլն. դրամը՝ գյուղական վայրերում կազմակերպված համերգներից: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 127.3 հազ. դրամ, ընդ որում, գյուղական վայրերում այդ ցուցանիշը կազմել է 18.2 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները կազմել են 247.0 մլն. դրամ, որի 72.9%-ը կամ 180.1 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 20.4%-ը (50.4 մլն. դրամ)՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 1.1%-ը (2.8 մլն. դրամ)՝ նվիրատվություններից, 2.9%-ը (7.0 մլն. դրամ)՝ վարձակալությունից, 2.7%-ը (6.7 մլն. դրամ)՝ այլ եկամուտներից:

Համերգային կազմակերպությունների տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 256.2 մլն. դրամ: Նյութական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 4.6%-ը կամ 11.9 մլն. դրամ, ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 13.6%-ը (34.9 մլն. դրամ), աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումները՝ 47.5%-ը (121.7 մլն. դրամ), պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 21.5%-ը (55.1 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 3.8%-ը (9.6 մլն. դրամ), հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերը՝ 1.1% (2.7 մլն. դրամ), այլ ծախսերը՝ 7.9%-ը (20.3 մլն. դրամ): Միջին հաշվով մեկ համերգի ֆինանսական ծախսերը 2002թ. կազմել են 647.0 հազ. դրամ:

**Համերգային կազմակերպությունների գործունեությունը ըստ մարզերի, 2002թ.**

	Համերգային կազմակերպությունների քանակը	Համերգների քանակը	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ
ք. Երևան	16	380	81.0	49885.7	213
Շիրակ	2	16	3.2	500.0	200
Ընդամենը ՀՀ	18	396	84.2	50385.7	213

**Համերգային կազմակերպությունների գործունեությունը, 1996-2002թթ.**

	Կազմակերպությունների քանակը	Համերգների քանակը	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ
1996	16	487	149.4	33256.0	307
1997	20	510	870.7	42601.7	1707
1998	21	579	952.6	47650.1	1645
1999	20	565	505.9	35089.6	895
2000	20	410	139.9	26710.0	341
2001	19	413	168.2	61322.0	407
2002	18	396	84.2	50385.7	213